

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐԱԲԱՏԱՌ ՎԻՄԱԳԻՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միքայելյան Տ. (ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)

mtigran2002@yahoo.com

Բանալի բառեր՝ արաբատառ, հուշարձան, վիմագրություն,
մահմեդական:

Հայտնի է, որ VIII դարից սկսած Հայաստանն անցավ արաբական խալիֆաների իշխանության տակ (VII-IX դդ.) և հարևան երկրների հետ միասին մտավ Արմինիա կուսակալության մեջ: Արմինիան կառավարվում էր արաբական խալիֆաների փոխանորդների կողմից: IX դարի սկզբում արաբների իշխանությունը Հայաստանում վերացվեց և վերականգնվեց Հայաստանի անկախությունը:

Հետագայում, XI դարից մինչև XIX դարը Հայաստանը կրկին անցնում է տարբեր մահմեդական պետությունների իշխանության տակ (Շադդադյաններ, Իլխաններ, Սելջուկյաններ, Կարա-Կոյունլու, Աք-Կոյունլու, իրանական հարստություններ և այլն), չնայած երկրի որոշ հատվածներում հայ իշխաններին հաջողվեց պահպանել իրենց իշխանությունը՝ ընդհուպ մինչև XV-XVI դդ. (Օրբելյանները Սյունիքում, Պռոշյանները Վայոց Ձորում, Վաչուտյանները Արագածոտնում և այլն):

Քաջ հայտնի է, որ Հայաստանի գավթումը մահմեդականների կողմից ուղեկցվում էր տարբեր ժամանակաշրջաններում արաբների, քրդերի, պարսիկների, բազմազան թյուրքալեզու քոչվոր և կիսաքոչվոր ցեղամիությունների ներթափանցմամբ և, համապատասխանաբար, հայ տեղացի բնակչության դուրս մղմամբ երկրից: Այս առումով, հատկապես ողբերգական էր Սեֆևյան շահ Շահ-Աբբասի տիրակալության տարիները, որի ընթացքում օսմանյան սուլթանների դեմ «այրված հողի» մարտավարության կիրառման արդյունքում 1604 թ. Արևելյան

Հայաստանի գրեթե ամբողջ բնակչությունը քվեց Պարսկաստանի Սպահան նահանգը և փոխարենը քաջալերվում էր թուրքալեզու ցեղերի՝ որպես ուզմական ուժի ամրապնդումը Հայաստանում:

Այս մահմեդական վերաբնակիչները դարերի ընթացքում իրենց հետքն էին թողնում նաև մեմորիալ, գերեզմանային, շինարարական և այլ բնույթի վիմագիր արձանագրությունների տեսքով:

Հնագույն արաբատառ (դրանք կարող են լինել արաբերեն՝ հիմնական մասը և մի փոքր մասը՝ պարսկերեն և թուրքերեն) արձանագրությունները, որոնք թվագրվում են VIII դարով, հայտնաբերվում են հայոց եկեղեցիների (օրինակ՝ Զվարթնոցի, Բագավանի եկեղեցու) տարբեր մասերի վրա: Հնագույն արաբերեն և պարսկերեն մի քանի վիմագիր արձանագրություններ կան նաև Գառնիի տաճարի պատերին:

Մի քանի հնագույն արձանագրություններ գտնվել են Դվինից, որը Արմինիայի ձևավորման սկզբնական շրջանում, ինչպես հայտնի է, հանդիսացել է արաբ ոստիկանի նստավայրը (701 թ.-ից) և մեծաթիվ արաբամահմեդական բնակչություն ուներ: Դվինից գտնվել են նաև նյութական մշակույթի բազմաթիվ իրեր՝ խեցեղեն, ապակի, բյուրեղապակի, ջահեր, կնիքներ և այլն, որոնք պարունակում են արաբերեն արձանագրություններ կամ արաբական գրի իմիտացիա:

Սույն զեկուցման նպատակն է ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գտնված թե՛ վաղ, թե՛ ավելի ուշ միջնադարի նշանակալից արաբատառ վիմագիր արձանագրություններն ու մահմեդական հուշարձանները, դրանց առնչությունները հայ բնակչության հետ և աղբյուրագիտական նշանակությունը:

ARABIC EPIGRAPHIC INSCRIPTIONS ON THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

Mikayelyan T. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental Studies, Armenia)